

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Շաբաթ, 22 Նոյեմբերի, 2008

Լոս Անջելոս կատարած պաշտօնական այցի շրջանակում, ՀՀ Սփիւռքի նախարարուհի Հրանուշ Յակոբեանը Ուրբաթ, Նոյեմբերի 21-ի երեկոյեան այցելեց ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կենտրոնատեղին, ուր ընդունուեց Կենտրոնական Կոմիտէի անդամների, ուղեկից կազմակերպութիւնների ու Դաշնակցութեան համակիր այլ շրջանակների ու հաստատութիւնների ներկայացուցիչների կողմից: Միջոցառմանը ողջոյնի եւ բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանը, որը նշեց, թէ «Հայաստանի վերանկախացումից յետոյ, Սփիւռքի նախարարութեան ստեղծումը առաջին շոշափելի քայլը եղաւ, որ Հայաստանը ձեռնարկեց լրջօրէն Սփիւռքի հետ գործակցելու նպատակով: Մենք, մեր հերթին, պատրաստ ենք ձեզ օժանդակելու, ձեզ հետ աշխատելու ամէն գնով, եւ կը մաղթենք յաջողութիւն ձեր առաքելութեան մէջ, այն հասկացողութեամբ, որ ձեր յաջողութիւնը կը լինի համայն հայ ժողովրդի յաջողութիւնը»,- իր խօսքը ուղղելով նորանշանակ նախարարուհուն ասաց Աւետիք Իզմիրլեանը: Այնուհետեւ, ելոյթ ունեցաւ նախարարուհի Հրանուշ Յակոբեանը, որը նախ ողջունեց ներկաներին եւ ապա անդրադարձաւ Սփիւռքի նախարարութեան առաքելութեանը, նշելով, որ «նախարարութեան գլխաւոր առաքելութիւնն է համակարգել պետական կառավարման բոլոր մարմինների գործունէութիւնը՝ Սփիւռքի հետ տարուող աշխատանքներում»: Հաստատելով այն իրողութիւնը, որը հայութեան երկու երրորդն այսօր ապրում է Սփիւռքում, նախարարուհին կարեւորեց սփիւռքահայութեան ներուժի ու կարողականութեան օգտագործումը հայրենիքի զարգացման ու հզօրացման համար: «Այս ամէնին մենք կարող ենք հասնել համատեղ աշխատանքի շնորհիւ եւ շատ լաւ գիտակցում ենք, որ Սփիւռքի հետ մենք պետք է գործակցենք»,- նշեց Հրանուշ Յակոբեանը եւ այնուհետեւ խօսեց այն ծրագրերի ու աշխատանքների մասին, որոնք Սփիւռքի նախարարութիւնը կազմակերպում է իրագործել եկող ամիսներին ու տարիներին: Իսկ անդրադառնալով Դաշնակցութեան հետ իր ունեցած համագործակցութեանը, նախարարուհին ասաց, թէ «Ես անկախութիւնից առաջ եւ անկախութիւնից յետոյ միշտ էլ աշխատել եմ դաշնակցական իմ ընկերների ու գործընկերների հետ՝ եւ խորհրդարանում եւ կառավարութիւնում եւ կարծում եմ, որ այս համատեղ աշխատանքի արդիւնքը եւ Հայաստանում եւ այստեղ պետք է տայ իրօք արդիւնք եւ մենք պետք է միասնաբար ուժեղացնենք Հայաստանը»: Յատկանշելի է, որ տոյն այցելութեանը նախարարուհի Հրանուշ Յակոբեանին ընկերակցում էին Լոս Անջելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոս՝ Արմէն Լիլոյեանը եւ փոխհիւպատոս՝ Մեսրոպ Շաւոյեանը: հանդիպմանը ներկայ էին նաեւ ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի տարածքում գործող 16 կոմիտէների, Հայ Դատի Յանձնախմբի, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, ՀՀ-ի Պատանեկան միութեան, Ազգային վարչութեան, Կալիֆորնիայի ազգային վարժարանների խնամակալ մարմնի ներկայացուցիչները, Ազգային վարժարանների տնօրէնները, Հայ Օգնութեան Միութեան, ՀՄԸՄ-ի «Համազգային» հայ կրթական ու մշակութեան ընկերակցութեան, Կալիֆորնիայի գրողների միութեան, Հայ կրթական հիմնարկութեան եւ «Դաւթեան-Մարիամեան» կրթական հաստատութեան, ներկայացուցիչները: Միջոցառմանը ներկայ էին նաեւ Լոս Անջելոսում գործող Հայրենակցական միութիւնների ներկայացուցիչները, ովքեր ատելի ուլ հանդիպում ունեցան Կենտրոնական Կոմիտէի հանրային կապի յանձնախմբի հետ: Միջոցառումը ավարտուեց ի պատիւ նախարարուհու կազմակերպուած հիւրասիրութեամբ:

Այս լուրերը տրամադրուած են
ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրուելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: